

Կիպրոսի արտաքին գործոց նախարար Եոաննիս Բասուլիտես երկ կայտնում է, թե մեծ յոյսեր չունի խաղաղարար բանակցությունների նոր փուլի սկսման վերաբերյալ:  
Մինչ Կիպրոսի Երրորդական Միության անդամակցությունը կր մտնենալ, կղզիին իրարու մրցակից լինելու և թուրք կողմերը մեկ տարուան դադարի մը ետք ՅՈՒՆՈՒՍԿՈՒՍԻ բանակցությունները վերսկսած էին՝ կղզիին բաժանման հարցը լուծելու համար:  
Սակայն Բասուլիտես կայտնում է, թե կողմերին ո՛չ մէկը փոքր մի տրամադրություն վերադարձած է բանակցությունները և թե ցարդ գրեթէ յառաջդիմություն չէ արձանագրում:  
Ան դիտել տուած է, որ ասիական տակալին բանակցությունները սկիզբն է եւ թե «թերեւս դիրքորոշումները պիտի պարզանան» եւ յառաջդիմություն պիտի արձանագրուի:  
(ՌՈՅԹԸՐԶ)

## ՆԱԽԱԳԱՐՆԵՐ՝ ԱՍԱՏ ԵՒ ԼԱՐՈՒՏ ԿԵՐԱՇԱՍՏԱՏԵՑԻՆ ԴԱՄԱՍԿՈՍ-ՊԵՅՐՈՒԹ ՄԻԱՑԵԱԼ ԿԵՅՈՒԱԾԵՐ՝ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐՏԱՇՐԱԿԵՐՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ

Սուրիոյ նախագահ Ասատ Երէկ մի-օրեայ այցելութիւն մը տուաւ Լիբանան: Ան դանիակ ժողով մը գործարկեց նախագահ զօր-ծմիլ Լահուտի հետ, ապա զոյգ նախագահներու գլխաւորութեամբ կայացաւ լիբանանեւսուրիական զերագոյն խորհուրդի ժողովը, որուն ընթացքին Սուրիա տնտեսական բազմաթիւ դիւրութիւններով վերահաստատեց, որ Լիբանանի զօրավիճակը կը կանգնի բոլոր ընդհանուրներէն ներս: Ժողովը նաեւ պահանջներու արարեւիստայնէան տագնա-

ստանձնելէ ետք նախագահ Ասատ Երէկ առաջին անգամ ըլլալով Լիբանան կ'այցելէր:  
Երրորդ անգամն է, որ սուրիացի նախագահ մը կ'այցելէ Լիբանան. առաջինը՝ 1947ին, նախկին նախագահ Շուբրի Բուաթիլի, երկրորդը՝ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի 1975ին Շիռա այցելութիւնը:  
Պէյրութի մէջ երեք արաբիացի գումարութիւններու արարական վեհաժողովի եւ Երեքշաբթի օր նախագահ Ասատի Մշուտական Արաբիա տալիք այցելութեան նախօրեակին գումարական լիբանանեւսուրիական այս խորհրդ-



Նախագահներ՝ Ասատ եւ Լահուտ հանդիպումի ընթացքին:



Սուրիոյ եւ Լիբանանի քայլերգներու ունկնդրութիւն:

պին եւ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին առնչութեամբ երկու երկիրներու սկզբունքային կեց-ւածքները:  
Սուրիոյ ղեկավարութիւնը Յունիս 2000ին

**ԺԱՍԱՆՈՒՄ**  
Նախագահ Պաշար Ասատ Երէկ կէսօրէ ժամը 10:25ին ժա-

մանեց Պէյրութի օդակա-նանցի կ'ընկերակ-ցէին Սուրիոյ խորհրդարանի նախագահ Ապտէլ Քատէր Քատուր, վարչապետ Մոհամէտ Մուսթաֆա Միրո, փոխ վարչապետ եւ արտաքին գործոց նախարար Յարութ Շարէզ եւ անձնաւորութիւններ:  
Օդակայանին մէջ Սուրիոյ ղեկավարութիւնը դիմաւորեցին նախագահ զօր-ծմիլ Լահուտ, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրի, վարչապետ Ռաֆիք Հաբիբ, բազմաթիւ նախարարներ, երեսփոխաններ, պետական պաշտոնատարներ եւ Լիբանանի մէջ օտար պետութեանց ղեկավարներ:  
Լիբանանեան բանակի հրետանին 21 հարուածով դիմաւորեց Սուրիոյ նա-

խագահը, որ իր լիբանանցի պաշտօնակիցին հետ նաեւ ողջունեցաւ պատուոյ պահակազուն-դին կողմէ:  
Օդակայանէն երկու նախագահները ուղղուեցան Պապուսի նախագահական պալատ: Ամբողջ ճամբան զարդարած էր լիբանանեան եւ սուրիական դրօշներով եւ Սուրիոյ ղեկավարին այս պատմական այցելութիւնը ողջունող գրութիւններ կրող պատուներով:  
Նախագահներ Լահուտ եւ Ասատ գումարեցին դանիակ հանդիպում մը, որ տեւեց աւելի քան մէկուկէս ժամ. ապա անոնք համանախագահեցին լիբանանեւսուրիական զերագոյն խորհուրդի ժողովին, որուն ներկայ գտնուեցան Սուրիոյ

խորհրդարանի նախագահ Ապտէլ Քատէր Քատուր, վարչապետ Մոհամէտ Մուսթաֆա Միրո եւ փոխ վարչապետ, արտաքին գործոց նախարար Յարութ Շարէզ, իսկ լիբանանեան կողմէն՝ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրի, վարչապետ Ռաֆիք Հաբիբ եւ փոխ վարչապետ Իսամ Յարէզ, ինչպէս նաեւ խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Խուրի:  
Ժողովին սկիզբը, նախագահ Լահուտ ժողովականներէն խնդրեց մէկ վայրկեան յոտնկայս լուծեմամբ յարգել լիբանանեւսուրիական նախագահ Հաֆէզ Ասատի, որ մեծագոյն զերբ ունեցած է այս խորհուր-

Շար-ը՝ էջ 2

### ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓՈՐՍԵՆՈՒ ՅԱՍԱՐ

#### ՍՈՍԿՈՒԱ, ՌԻԱՇԻՆԿԹԸՆ ԵՒ ԹԻՖԼԻՍ ԲԱՅԼԵՐՈՒ ԿԸ ԴԻՄԵՆ

Ռուսիա, Մ. Նահանգներ եւ Վրաստան շարժա-վելիին քայլերու դիմած են՝ վերջ տալու համար իրենց տարակարծութիւններուն, նեղ կացութեան մատնող բանավէճերէ ետք՝ ամերիկացի զինուորներ Վրաստան առաքելու որոշումի մը գծով:  
Անցեալ շաբթուան այն յայտարարութիւնը, թէ Ուաշինկթըն 200 յատուկ ուժեր պիտի ղրկէ՝ Վրաստանի բանակը մարզելու եւ զինելու համար, Մոսկուայի մէջ զարթոյթի ալիք մը բարձրացուցած էր:  
Սակայն նախագահ Վլադիմիր Փուտին Ուրբաթ օր անակնկալօրէն յետ կոչած էր Ռուսիոյ առաքելութիւնները, յայտնելով, որ թշնամական բնոյթի հակադարձութիւնը տեղի ունեցած էր, միայն որովհետեւ Մոսկուա ուշ տեղեակ պահուած էր այդ մասին:  
Շաբթ օր, Փուտինի ապահովութեան մարզի բարձրաստիճան խորհրդակցան Վլադիմիր Ռուշալո Վրաստան մեկնած է ներկայ գտնուելու համար նախագահ Էտուարտ Շեւարտնաձէի մէկ սերտ խորհրդակցանի յուղարկութեան՝ երկու երկիրներուն միջեւ բարեկամութեան յստակ առաջարկով մը:  
Մոսկուայի մէջ, ամերիկացի ղեկավար Ալեքսանտր Վըրչպոստե տեղեկատու աղբիւրներու ճամբով՝ հարցազրոյցներու ընդմէջէն վստահեցուցած է ռուսերուն, թէ Ուաշինկթըն գաղտնի որեւէ օրակարգ չունի:  
Մ. Նահանգներու եւ Ռուսիոյ միջեւ Մայիսին ծրագրուած վեհաժողովէն առաջ տարակարծութեանց վերջ տալու նպատակով, ան յայտնած է, թէ Ռուսիոյ նախնական զայրացած հակադարձութիւնը հիմնուած է ամերիկեան առաքելութիւնը սխալ ձեւով հակացած ըլլալու հարցին վրայ:  
Շար-ը՝ էջ 9

### ԱՐԻՒՆԱԼԻ ՇԱԲԱԹԱՎԵՐՁ՝ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Պաղ Եստի նեւա ն շրջաններն ու Իսրայելի արիւնալի շարա-թալերը մը են անցուցին՝ երկուստեք քանի մը տասնեակ զինուորներ ու վիրաւորներ տա-լով: Ապահովութեան կացութեան վատթարացումը զօրաւոր հարուած մը տուաւ խաղաղարար ճիգե-րուն, որոնք կը փոր-ձեն անդորրութիւնը վերահաստատել շրջանին մէջ:  
Շայրայելի կա-պաղ Եստի նեւա երէկ երկու գործողութիւններ կատարեցին իսրայէլացիներուն դէմ, 21ի բարձրացնելով շարաթալերը իսրայէլացիներուն թիր:Շարաթ գիշերուան անձնասպանական գործողութիւնը տեղի ունեցաւ Արեւմտեան Երուսաղէմի մէջ, ուր պաղեստինցի մը ինք-պինք պայթեցուց ծայ-րայեղ իրեայ ուղղա-

փառներու թաղամասի մը մէջ: Արիւնքը՝ ինը վոհ եւ տասնեակ մը վիրաւորներ: Չորս-հերուն կարգին էին մէկ ընտանիքի չորս անդամներ: Գործողութիւնը պատահած էր այն պահուն, երբ հրեաները կը վերադառնային Շարաթ գի-շերուան աղօթքէն: Երուսաղէմի գործողութեան պատասխանաւ տուութիւնը ստանձնուեցաւ Ես-տի Սրաֆաթի ղեկա-վարած Ֆաթի շարժու-մի պինեալ թեւերէն՝ «Աքսայի նահատակ-ներու փաղանգ-ներ»ուն կողմէ, որ յայտարարեց, թէ անձ-նասպանական գոր-ծողութիւնը կատարած է 18 տարեկան Ռահմէտ Տարապէ: Շարժումին անունով կատարուած հեռա-ձայնային հաղորդակ-ութիւնը մը յայտնեց, որ գործողութիւնը կատարուած է լուծե-

լու համար վրէժը 21 պաղեստինցիներուն, որոնք սպանուած էին անցեալ շաբաթ, երբ Իսրայել ներխու-ժեց Պալատայի եւ Ժե-նիին գաղթականա-նները: Աւելի ուշ, մո-տաւորապէս 1500 պա-ղեստինցիներ քայլե-ցին «Տիպիլ» գաղթա-կանային փողոցներուն մէջ, ուր պաղեստին կանչեցրով ողջունելու համար Տարապէի նահատակութիւնը: Տարապէ յիշեալ գաղ-թականային բնակիչնե-րէն էր:  
Իսրայելի դատա-պարտեց գործողու-թիւնը, դիտել տալով, որ անիկա մարդաս-պանութիւն է: Իսրայել վերստին մեղադրեց Արաֆաթը, շեշտելով, որ ան կը պինեալ ծայրա-յեղական խմբակները եւ ոչինչ կ'ընէ պա-նոնք սանձելու հա-մար:  
Շար-ը՝ էջ 10

### «ԵՐԿԻՐ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝ Զ. Յ. Դ. ԲԻԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԶՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՅԵՏ

#### ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ՆՈՅՆԱՑՈՒՑԱԾ Ե ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Կ'ԸՍԵ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ  
ՀԱՐՑՈՒՄ.- Այսօրուան Հայաստանի հասարակութիւնն առանձնանում է իշխանութիւնների ու քաղաքական ուժերի, միաժամանակ՝ վերջիններիս ու ժողովրդի միջեւ խորացող անջրպետով: Այն արդէն փտանգաւոր չափերի է հասնում, եւ ելք գտնելը օրինակի հարց է դարձել: Միաժամանակ խորանում է քաղաքական դաշտում կոյր ատելութիւնը: Ձեր գնահատականը, եւ արդեօք կա՞յ այս վերջի դարձա-նումը:  
ՊՍԱՍԻԱՆ.- Քաղաքական կազմակերպու-ւած ուժերի, կուսակցութիւնների դէմ արշաւը ներկայումս համաշխարհային երեւոյթ է, ու մեր երկիրը եւս բացառութիւն չէ, մասնաւոր որ մենք չունենք կայացած ժողովրդավարութեան անդրոյթներ, տասնամեակներ շարունակ ապրել ենք միակուսակցական իշխանութեան պայմաններում:  
Աւելի՛ս. իբրեւ երկիր եւ պետութիւն՝ մաս էինք կապում շատ մեծ կայսրութեան, եւ բնա-կան է, որ այդ մեծ ամբողջականութեան մի փոքր բաժինը լինելով՝ Հայաստանի քաղաքա-ցին չէր էլ կարող պատկերացնել, որ իր անհա-տական կամ կազմակերպուած մասնակցու-թեամբ քաղաքական պայքարում ի վիճակի է այդ մեծ ամբողջութեան մէջ որեւէ փոփոխու-թիւն մտցնել: Նա յաճախ այդ փոփոխութիւնը սպասել է վերեւներից, իր յոյսը կապել է «փո-լիթիքիւրյում» ժամանակ առ ժամանակ երեւա-ցող, համեմատաբար դրական անձանց, քան սեփական պայքարի. կազմակերպութեան հետ: Այս մտայնութիւնը շարունակում է մինչ հիմա, եւ այս երեւոյթը մեր հասարակութեանը հասցրել է ապաքաղաքականացման կամ քա-ղաքական անկազմակերպութեան:  
Մեր ժողովուրդն ապրել է նաեւ 1988 թուա-կանից յետոյ դարաբաղեան շարժման առաջ բե-րած մեծ ռեւոլուցիոնային ու դրանից յետոյ ապ-րած յուսալքութեամբ՝ ի տես այն մարդկանց, ովքեր խօսել էին ժողովրդի բարօրութեան, եղած  
Շար-ը՝ էջ 10

#### ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՁ՝ ԲԱՆՈՒՄՆԵՐ

Աֆղանիստանի հնգամսեայ պատերազմին ընթաց-քին ամերիկեան գլխաւորութեամբ ցամաքային մեծա-գոյն յարձակողականը երէկ յաջողութեամբ երկրորդ օրն ըլլալով շարունակուած է, իսկ ռազմական Պր-52 տիպի օդանաւեր արեւելեան Աֆղանիստանի լեռ-նային ապաստաններու մէջ գտնուող թալեպան եւ «Քալիտա» զինեալներ ռմբակոծած են:  
Ամերիկեան օդանաւերը արձակած են նոր մշակ-ւած 907 քլ. կշռող 2 ռումբեր, որոնք կը յառաջաց-նեն բարձր ճնշումով պայթուած մը, որ օդը դուրս կը մղէ քարայրէ մը եւ սկզբունքով խեղդամահ կ'ընէ հոն գտնուողները, յայտնած են պաշտպանութեան մար-զի ամերիկացի պաշտօնատարները:  
Յարդ առնուած 3 աֆղան զինուոր եւ ամերիկա-ցի զինուոր մը մահացած են եւ կան վիրաւորներ:  
Աֆղանիստանի մէջ ամերիկեան գլխաւորութեամբ պատերազմին սկսումէն ի վեր ամերիկացի երկրորդ զինուորին մահը պատահած է Շարաթ օր, երբ Քալի-տա-թալեպան շուրջ 5000 զինեալներ՝ մեծամասնու-թեամբ արարներ եւ այլ օտարներ, հրթիռներ, գնդա-ցիբներ եւ հրետանի գործածած են ետ մղելու համար աֆղան ուժեր:  
Աֆղան զինուորներ, որոնք ճակատէն նոր վերա-դարձած են, յայտնած են, թէ շուրջ 60 ամերիկացի խորհրդակցանք պարտադրաբար իրենց փոխադրա-կաւորները լքած եւ խոյս տուած են՝ իրենց կեանքը փրկելու համար: Շուրջ 2500 մեթր բարձրութեան վրայ գտնուող խորհրդակցանքերը փրկուած են երբ ամերիկեան ուղղաթիռները էջը կատարած եւ գանոնք այլ վայր փոխադրած են:  
Նորագոյն գործողութիւններուն սկսումէն քանի մը օր առաջ, ամերիկեան գաղտնի սպասարկութեանց պաշտօնատարներ միայն 500էն 600 հոգիով կը գնա-հատէին թշնամիներուն թիւը, սակայն սաստիկ դի-մադրութեան յոյսին տակ ենթադրութիւնները այն-պիսին են, թէ նշալ թիւը շատ փոքր է: Աֆղան զի-նուորներու համաձայն, 3000էն 5000 զինեալ վը գտնուի խնդրոյ առարկայ շրջանին մէջ:  
(ՌՈՅԹԸՐԶ)

# ՆԱԽԱԳԱՀՆԵՐ՝ ԱՍԱՏ ԵՒ ԼԱՇՈՒՏ ԿԵՐԱՇԱՍՏԱՏԵՑԻՆ ...

զի կազմութեան, կազմակերպումին, եւ գործունէութեան թափ տալուն մէջ:

Ժողովի անարտին, նախագահներ Ասատ եւ Լաշուտ ստորագրեցին ժողովի որոշումներն ու ատենագրութիւնը, ապա ժողովին ներկայ գտնուած պաշտօնատարներուն հետ ուղղութեան դէպի նախագահական պալատի «գեսպանական հիւրասրահ», ուր նախագահ Լաշուտ իր սուրիացի պաշտօնակիցը պարգեատրեց Արժանաւորաց արտակարգ աստիճանի շքանշանով, որ կը շնորհուի միայն պետութիւններու ղեկավարներուն, իսկ նախագահ Ասատ նախագահ Լաշուտը պարգեատրեց Ումայյալի բարձրագոյն կարգի Ազգային շքանշանով:

Այնուհետեւ երկու նախագահները ուղղութեան Պապատայի պալատի մուտք, ուր նախագահ Ասատ «Ոսկեայ տոմար»ին մէջ ձգեց արձանագրութիւն մը, որուն մէջ շնորհ գրացումներ յայտնեց նախագահ Լաշուտի եւ Լիբանանի, հաստատելով, որ երկու երկիրներու հաղորդակցութիւնը պիտի շարունակուի բոլոր բնագավառներէն ներս, ի շահ երկու երկիրներուն եւ անոնց ժողովուրդներուն:

Նախագահ Լաշուտ ապա ճաշկերոյթ մը տուաւ ի պատիւ նախագահ Ասատի եւ անոր ընկերակցող բարձրաստիճան պատուիրակութեան:

Ճաշկերոյթի անարտին, կէսօրէ ետք ժամը

3:30ին, երկու նախագահները ուղղութեան դէպի լիբանանեւտրիական Մասնա սահմանային կէտը:

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Լիբանանեւտրիական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Սուրի կարգաց խորհուրդի ժողովին եւ որոշումներուն մասին պաշտօնական յայտարարութիւնը:

Ան ըսաւ, որ նախատօնակիցը պարգեատրեց Արժանաւորաց արտակարգ աստիճանի շքանշանով, որ կը շնորհուի միայն պետութիւններու ղեկավարներուն, իսկ նախագահ Ասատ նախագահ Լաշուտը պարգեատրեց Ումայյալի բարձրագոյն կարգի Ազգային շքանշանով:



Համաձայնագիրներու կնքում:



Խորհրդակցութիւններու ընթացքին:

եան տագնապին վերջ դնելու որեւէ ճիգ պէտք է հիմնուի Մատրիտի խորհրդաժողովի սկզբունքներուն, մաս-

նաւորապէս՝ խաղաղութեան փոխարէն հող տարազին վրայ, ինչպէս նաեւ ՄԱԿի որոշումներուն վրայ, որոնք կ'ապահովեն բռնագրաւել ըլլող արաբական հողերու ազատագրումը եւ կ'երաշխաւորեն պաղեստինցի գաղթականներու տունդարձը, անոնց անկապտուելի ստեղծումը՝ մայրաքաղաք ունենալով Երուսաղէմը:

Ժողովէն ետք հրապարակուած միացեալ հաղորդագրութիւնը յայտնեց, որ Լիբանանի եւ Սուրիոյ նախագահները հաստատեցին, որ

Ծարուհակուած Ա. Էջէն բռնագրաւումէ ազատագրելու համար զիմադրութեան իրաւունքին:

Միացեալ յայտարարութիւնը յայտնեց, որ Սուրիոյ նախագահին այցելութիւնը ողջունելով, նախագահ Լաշուտ նկատեալ տուաւ, որ անիկա մէկ արտայայտութիւն է երկու երկիրներուն միջեւ մնայուն եղբայրական հաղորդակցութեան եւ Սուրիոյ կառչածութեան՝ Լիբանանի միութեան, գերիշխանութեան եւ արաբականութեան, ինչպէս նաեւ բոլոր մարտահրաւէրներուն եւ սպառնալիքներուն, մանաւանդ իսրայէլեան ոտնձգութիւններուն դիմաց միեւնոյն կեցուածքն ու ճակատագիրը բաժնելու երկու երկիրներու վճռակամութեան:

Նախագահ Լաշուտ նաեւ վեր առաւ իր սուրիացի պաշտօնակիցին այս այցելութեան կարեւորութիւնը, նկատի առած, որ անիկա կը տրուի շրջանային այս գրագրուն պայմաններուն մէջ, եւ արաբական վեհաժողովի նախորեակին, Ասատի անիկա առիթ պիտի հանդիսանայ միասնաբար գնահատականը կատարելու զարգացումներուն եւ բիւրեղացնելու միացեալ պատկերացում մը յաջորդ հանգրժանի մարտահրաւէրները զիմադրաւելու ձեւերուն եւ միջոցներուն շուրջ:

Նախագահ Լաշուտ ժողովին ընթացքին նաեւ հաստատեց, որ Սուրիա Լիբանանի կողքին կանգնեցաւ իսրայէլեան բռնագրաւումէն ազատագրելու համար լիբանանեան հողը եւ նեցուկ կանդնեցաւ լիբանանեան

բանակին եւ զիմադրութեան եւ այս զօրակցութիւնը առաջին եւ զլիբանոց յենարանէն, որուն շնորհիւ Լիբանան կրցաւ պարտադրել իսրայէլեան հեռացումը իր հողատարածքի մեծագոյն մասէն:

Ան նաեւ ընդգծեց, որ վերջին տարիներուն արաբ եւ իսրայէլեան տաղանային զարգացումները հաստատեցին, որ Լիբանանի եւ Սուրիոյ որդեգրած միացեալ քաղաքական ընտրանքները ճիշդ էին:

Նախագահ Ասատ շնորհակալութիւն յայտնեց իր լիբանանցի պաշտօնակիցին կեցուածքին համար եւ հաստատեց անհրաժեշտութիւնը՝ աշխատանք տանելու լիբանանեւտրիական մասնաշաղկապներու թիւերը զարգացնելու եւ ամրապնդելու, միաժամանակ կառչած մնալով երկու երկիրներուն ազգային պարկէտի եւ սկզբունքային կեցուածքին, ընդգծեց բախտորոշ մարտահրաւէրներուն:

Այս ծիրէն ներս այս յայտարարեց երկու երկիրներու տնտեսական գործակցութիւնը ամրապնդելու ուղղութեամբ Սուրիոյ կարեւոր որոշումները, յատկապէս լիբանանեան կողմի արձարձած երկու երկիրներու տեղական արտադրութեան փոխանակումներու կաշկանդումներուն ու արգելքներու վերացումը, լիբանանեան կողմի առաջարկած Ասիական Կարգի վրայ ջրամբար կառուցելու ծրագիրը, ինչպէս նաեւ միացեալ ջրամբարի կառուցումը Քապրի գետին վրայ, Մուրիոյ Լիբանանի երկտարականութեան ընկերութեան պարտքերուն վերադասաւորումը



Նախագահ Լաշուտ...



... խորհրդարանի Գախագահ Պըրրի...



... Եւ վարչապետ Զարիրի կը դիմաւորեն Գախագահ Ասատը:

Եւ անոնց կէսին ջնջումը, զին Լիբանանի վաճառելիքէն նաեւ վերատուրելու սակը, լիբանանեան սուրիական բնական կա-

Շարք՝ էջ 3

## ՄԱՀԱԶԴ

Տիար Ժորժ Հաժժար  
Տէր եւ տիկին Յարութիւն Խոշմաթլեան  
Տէր եւ տիկին Մեհրոպ Խոշմաթլեան եւ զաւակունք  
Տիկին Վերթին Խանիկեան եւ զուստրը  
Տէր եւ տիկին Աւետիս Խանիկեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Սարգիս Ծոզիկեան եւ զաւակունք  
Օր. Յասմիկ Խանիկեան  
Տէր եւ տիկին Ռուբէն Մուշեան եւ զաւակունք  
Հաժժար ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, աղջկան, քրոջ եւ հարազատին՝

## ԱՐՔՈՒՇԻ ՀԱԺժԱՐԻ (Ծնեալ՝ ԽՈՇՄԱԹԼԵԱՆ, Դամասկոս, 1946իԳ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 28 Փետրուար 2002ին, Պեյճիքայի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 5 Մարտ, Անվէրսի մէջ Պեյճիքա:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին ծնողքին՝ տէր եւ տիկին Յարութիւն Խոշմաթլեանի բնակարանը, Դամասկոս:

## ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Նուպար Զէօրէքեան եւ զուստրը՝ Լուսին

Տէր եւ տիկին Երուանդ Զէօրէքեան եւ զաւակը՝ Արի Օրդ. Արփինէ Թաֆէքեան

Տէր եւ տիկին Հայկ Զէօրէքեան  
Տէր եւ տիկին Վարուժան Թէնպէլեան եւ զուստրը  
Տիկին Անահիտ Պաղտասարեան եւ զաւակունք  
Խոսրով եւ Հրայր Զէօրէքեաններ

Տէր եւ տիկին Լեւոն Ղոչախեան եւ զաւակունք  
Տիկին Մարի Կէօզէրեան եւ զաւակունք  
Տէրտէրեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, զարմուհիին եւ հարազատին՝

## ԼՈՒՍԱԾԻՆ ԶԵՕՐԷՔԵԱՆԻ (Ծնեալ՝ ԹԱՖԷՃԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 1 Մարտ 2002ին, Շիքալի, Մ. Նահանգներ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շիքալի մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը կը յայտնէ, թէ Ընդհանուր Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը յայտարարեց, որ կարիքը ունի պիստորագրելու իրաւաբանութեան վկայական (լիսանս) ունեցող այրեր, որոնք քննութիւն-մրցանքով յաջողելու պարագային՝ պիտի ընդունուին սպայի աստիճանով:

Թեկնածուն պէտք է լիբանանցի ըլլայ աւելի քան տար տարիէ ի վեր, պէտք է ըլլայ ամուրի, այրի, կամ ամուսնալուծուած, եւ վաւակ պէտք չէ ունենայ: Ան պէտք է ունենայ լիբանանեան Բ. պաքարտէս կամ անոր համապատասխանող վկայական, ինչպէս նաեւ իրաւաբանութեան լիբանանեան վկայական (լիսանս), իսկ համալսարանական ուսման տարիներու միջինը պէտք է ունենայ 12/20 եւ վեր:

Թեկնածուն պէտք է կատարած ըլլայ պիստորական ծառայութիւնը, կամ կատարելու ընթացքի մէջ ըլլայ, եւ կամ մէկ հատիկ ըլլալուն համար անկէ վեր զարգացում ըլլայ: Առաւելագոյն տարիքը քաղաքայիններուն համար 24ն է, իսկ պիստորականներուն՝ 26:

Թեկնածուն պէտք է վայելէ քաղաքացիի բոլոր իրաւունքները եւ մէկ ամիսէն աւելի քննարկութեան վճիռ ստացած պէտք չէ ըլլալ:

Դիմումները կ'ընդունուին 11/3/2002էն մինչեւ 4/4/2002, Ընդհանուր Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէնութեան կեդրոնատեղիին մէջ, Արդարութեան պալատին դիմաց: Մինչ այդ, յաւելեալ մանրամասնութիւններ կարելի է ստանալ այդ ուժերու շրջանային կեդրոնատեղիներէն, ինչպէս նաեւ Հայկական Երեսփոխանական Գրասենեակէն, «Շաղկոյեան» կեդրոն, Բ. յարկ:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՖՈՒՏ

### ԶՐՈՅՑ - ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Նիւթ՝ T. V. A.

### ՅԱԿՈՐ ԱՐԱՇԱՍՏԵԱՆ

(ԵՐԴՈՒՄԵԱԼ ԸԱՅՈՒՒՆԵՆՆՈՒԹՅՈՒՆ)

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 5 Մարտ 2002, երկուշաբթի ժամը 8:00ին, «Յ. Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը լիբանանցի ընտրական գրասենեակը կը տեղեկացնէ, թէ ընտրական գործընթացը կ'աւարտուի 2002ի Երեսփոխանական ընտրութիւններուն չկրցանք ընտրուելի՝ անունի կամ այլ սխալ պատճառով, Գախագահութեան որոշումով իրաւունք ունին մինչեւ 11 Մարտ 2002 կատարել սրբազորութիւններ:

Սրբազորութիւններ եւ ստուգումներ կատարելու համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղկոյեան» Մշակութային Կեդրոն, Բ. յարկ, հեռ. 01-259881:

Դիմողները պարտին իրենց հետ ունենալ իրաւունք ընտրուելու:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կէսօրը ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզարա) եւ պետական հիւանդանոցային բուժում:
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնունք (Տաման):
- 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
- 4) Գաղթականներու Գախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու Գախարարութեան (Կոմիտաս) դիմումներ:
- 6) Աշխատանքի Գախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Ապասարկութեան (ԱճԵ Էլ Աճ) հետ կապուած հարցեր:

Դիմողները պէտք է ներկայանան «Շաղկոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ Գախարար Գերկայանը հեռաձայնը 01-259881 եւ 01-242582 թիւերուն:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ



ԱԿՆԱՐԿ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ Է ԱՆՀՐԱՎԵՇՏ

Մեր ազգային - հասարակական կեանքին մէջ կ'երեւի ամէնէն խնդրաշարժաց հարցերը ծագած են ընկերվարական գաղափարասու-

Բայց Խորհրդային Միութեան ստեղծումով էր մանաւանդ, որ ընկերվարական գաղափարասու-

Յստակ է միայն այն, որ ընկերվարութեան կիրարկման այդ վիժած փորձը իր ժխտական

Այսուհանդերձ այս գաղափարասու-

Մանաւանդ այսօր մեքոք անմիջական անհը-

Այս անգամ անհրաժեշտ է գործել հաւատարիմ մնալով ընկերվարութեան սկզբնական արժեքներուն եւ մանաւանդ ընկերվարական բարոյականութեան մարդոց հարցերը լուծե-

Այս անգամ անհրաժեշտ է գործել հաւատարիմ մնալով ընկերվարութեան սկզբնական արժեքներուն եւ մանաւանդ ընկերվարական բարոյականութեան մարդոց հարցերը լուծե-

ԺԱԲ ՅԱԿՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՀԵՏ

Հայաստանի գիտութիւններու ազգային ակադե-

Համագործակցութեան շրջագիծին մէջ արեւելա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՈՎ ՏՕՆԱՎԱՃԱՌԻ ԿԵԳՐՈՆԻ ԱՆՀՐԱՎԵՇՏՈՒԹԻՒՆ

Ըստ Չարգացման հայկական գործակալութեան գործադիր տնօրէն Վահագն Մովսիսեանի, արդիւնա-

Այն յայտնած է, որ գործակալութիւնը դիմած է Հայաստանի կառավարութեան «Երէքսփո» (նախկին Ժողովրդական տնտեսութեան նուաճումներու տո-

ԵՐԵՒԱՆ - ԾՐԱՆՔԾՈՐԹ ԹՈՒՉՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

23 փետրուարին նախատեսուող Երեւան - Ֆրանքֆորթ թռիչքը, որ պէտք էր իրականաց-

Նշենք, որ այս թռիչքով օդանաւը պէտք էր փոխադրէր 59 ուղեւոր, որոնցմէ միայն 10-12 հո-

ԱՊՀ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՄ ՆՈՅՆՄԲԵՐԻՆ

Ըստ նախնական համաձայնութեան, այս տարուան Նոյեմբերին Երեւանի մէջ պիտի կա-

Ցուցահանդէսի ընթացքին տեղեկատուական կարհաստագիտութեան մէջ իրենց ներդրումը պի-

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԹՈՒՄՆԵՐՈՒՆ ԹԻՒՐ Կ'ԱՒԵՆԱՅ

Պաշտօնական վիճակագրութիւններուն համաձայն, անցեալ տարուան Յունուար - Դեկտեմբեր ամիսներուն Հայաստանի մէջ արձանագրուած ամուսնու-

Հայաստանի մէջ անցեալ տարուան ընթացքին 1000 նոր կազմակերպուած ամուսնական զոյգերէն ամուսնալուծուած են 144ը:

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԻՒՆ

Հնդկաստանի մէջ Հայաստանի դեսպան Արմէն Բայրուրեան 22 փետրուարին իր հաւատարմագիրը յանձնած է Սրի Լանքայի նախագահ Չանտրիքա Գումարաթունկայի:

ԱՐՅԱՆ ԿԸ ՅԱՐԳԷ ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ՉՈՀԵՐՈՒՆ ՅԻՇԱՍԱԿԸ

Հինգշաբթի, 28 փետրուարին Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Ղուկասեան, հանրապետութեան օրէնսդիր եւ գործադիր

ԱԶՐՊԵՅՃԱՆԵՆ ԵՒ ԿՐԱՍԱՆԵՆ ԵՏԶ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ Մէջ

Ամերիկեան բանակի 5 բարձրաստիճան սպաներու պատուիրակութիւն մը Հինգշաբթի, 28 փետրուարին վրաստանէն Հայաստան անցաւ, քննելու համար Ուաշինկթըն-Երեւան զինուորական կապերու զարգացումը:

Երեւանի մէջ ամերիկեան դեսպանատան բանբեր Ճոն Պալեան տեղեկացուց, թէ պատուիրակութիւնը հայկական համապատասխան շրջանակներու հետ պի-

ՎԱՐՈՒԹ ԵՐԵՔ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆԵՐ՝ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ

Միջազգային Կարմիր Նաչը Լեւոնային Ղարաբաղի Հարցով շրջանի Դոյախար, ինծաբերդ եւ Հին Թաղար գիւղերուն մէջ նորոգած է երեք դարմանատուներ:

1998ին այս ծրագիրին գործադրումէն ի վեր Միջազգային Կարմիր Նաչը Մարտունի եւ Մարտակերտ մարզերուն մէջ վերանորոգած է առողջապահական 43 կեդրոններ:

ՀԱՌԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԾԱՆՕԹԱՑՈՒՄ



27 փետրուարին «Hawaii University. Business and Computer University College»ի պատասխանատուները մամուլը սուղիսի մը ընթացքին ներկայացուցին համալսարանը:

Ասուլիսի ընթացքին խօսք առին առեւտրական գիտութիւններու բաժանմունքի վարիչ Ռոպերտ Նասըր եւ Կրէթիք տիգայն բաժանմունքի պատասխանատու Ծերիք Ծեհապ:

Յայտնենք, թէ «Hawaii University. Business and Computer University College» կը գտնուի Համրա, Գոմոտոր փողոց, «Lebanon and Gulf Bank»ի մօտ: Համալսարանի հեռաձայնի թիւն է.

01-752370/1/2/3/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԹԻՆ ԱՌԻԹՈՎ ԿԱՏԱՐԱԾ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՉՔՍ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Միշտ ալ հետաքրքրական եղած է օդաչուներու կեանքը: Իրենց ակնոցով դիտուած, ամոք կ'ուզենան իրայատուկ արարուծներ: Ֆրանսական գրականութեան մէջ Սերմոգ եւ յատկապէս Անթուան Տը Սեմբ Էքզիլիտի (Vol de nuit, Terre des Hommes եւայլն) մեծ հետաքրքրութիւն ստեղծած են:

Լեւոն Պերպերեան Պէյրութ ծնած է տարիներ շարունակ աշխատած է, ապրանք փոխադրելու մարզին մէջ մասնագիտացած «Թրենս Մետիքը-րէնիըն Էրուէյ»-ին հետ՝ իբրեւ օդանաւային ճարտարագետ, կատարելով բազմաթիւ թռիչքներ դէպի Սուտան, Չինաստան... Աֆրիկայ:

Աւելի քան քսան տարիէ ի վեր Միացեալ Նահանգներ հաստատուած՝ ան կը կատարէ ճոյն պաշտօնը ամերիկեան ընկերութիւններու հետ: Ստորեւ՝ թարգմանաբար եւ յապաւուած գրութիւն մը, դէպի Հայաստան կատարած իր անդրաճիլ թռիչքի առիթով:

7 Դեկտեմբեր 1988ին Պալմիտոնի Պրէտիլի (Քաննեթթիթթ) փոխադրեցի օդանաւ մը, որուն չորս շարժակներէն մէկը խանգարուած էր:

Երեկոյեան փորձեցի քննալ: Սակայն անկարելի էր, որ աչքերս փակէի: Փոփոխութեան համար փորձեցի հետեւել պատկերասփիւռի յայտագիրներու... Օրուան ցնցիչ լուրն էր «Երկրաշարժ Հայաստանի մէջ»: Չարմացած եւ անակնալի եկած այս անգամ քննալու պարտականութիւնը բոլորովին դուրս եկած էր օրակարգէս:

Կարելի է նկարագրել ահաւոր վիճակ՝ յուզուած ու ցնցուած: Մինչեւ առտու ոչ մէկ փոփոխութիւն:

Յաջորդ օր, առաւօտեան երբ կ'ուղղուէիք Պրէտիլի օդակայանը, ինծի ընկերակցող պատասխանատու օդաչուի զեպի կ'երեւան: Ես նկատի առնուած էի իբրեւ թռիչքի թեքի շարքերու ճարտարագէտ: Պէտք էր ուղղուէիք Մայամի մեր կեդրոնը եւ ապա Շէնչեն (Իրլանտա), որպէսզի ստանձնէիք մեզի տրամադրուած օդանաւները:

11 Դեկտեմբերին կազմ ու պատրաստ ապրանքներով եւ անձնակազմով ուղղուեցանք դէպի Երեւան: Չորսուկէս ժամ ետք, Երեւան քաղաքի վրան էիք՝ պատուած տպաւորիչ եւ խորհրդաւոր մշուշով մը: Երեւանի օդակայանէն «կանաչ լոյս» ստացած էիք՝ էջք կատարելու: Այդ օր Երեւանի թանկերի մէկ հսկայ օդանաւը, աննպաստ օդին պատճառով, ջախջախուած էր: Հետեւաբար, մեծ զգուշութեամբ կատարեցիք մեր էջքը:

Ապրում, յուզում եւ անկարելի իրագործած էի: Օդանաւով մը էջք կատարած էի իմ նախաձայրերուս երկիրը. թէեւ ահաւոր առիթով մը, սակայն կատարած էի իմ ներդրումս: Մանուկի մը նման կը սպասէի, որ օդանաւը կանգ առնէ եւ ոտքս կոխեմ Հայրենիքի հողին վրայ: Հազիվ դուրս բացուած երբ աստիճաններէն վար կ'ուղղուէիք՝ չզիմանալով կանչեցի.- «Ես հայ եմ»:

Օդակայանի պաշտօնէնները, որոնք դիմաւորելու եկած էին, անակնալի եկած, իրենց կարգին կը փոխանցէին իրենց երախտագիտութիւնը: Առաջին հերթին շփում ունեցանք Աւետիոյ շտապ օգնութեան խումբին հետ: Անոնք փոխանցեցին, թէ կրնայ զոհերու թիւը անցնել հարիւր հազարը: Ոչ շատ հեռու, հայ կին մը եւ ուսանող մը, որոնք եկած էին կամաւոր օժանդակելու՝ նկատելով, թէ յուզումս չեմ կրնար զսպել, հետաքրքրական ոճով մը, փորձեցին զիս մխիթարել.- «Ի՞նչ ունիս ախպեր ճան, միթէ սոված ես»:

Սուրճ եւ կրկնեփուկ հրամցուեցաւ մեր թռիչքին մաս կազմող անձնակազմին:

Իրարանցում եւ խնդրում... կ'ուզէի իմ կարգիս մասնակցել օժանդակութեան աշխատանքին, սակայն հազիւ սկսած աշխատանքի, արկած մը պատճառ դարձաւ, որ վիրաւորեմ դէմքս եւ ցաւեցնեմ կոնկա: Չէի կրնար աւելի աշխատել, հետեւաբար գործակիցներուս հետ փոխադրուեցայ պանդոկ: Հոն ալ դժուար էր հանգչել: Անհանգարտ էի, կամ աւելի ճիշդը գերխանդակաւ:

Պանդոկին պատուհանէն կը դիտէի Երեւանը: Տարօրինակ իրարանցում մը կը տիրէր: Ի վերջոյ համոզուեցայ, որ պէտք է քննալ, որովհետեւ յաջորդ օրն իսկ պէտք էր վերադառնալ: Այդօք մը՝ անմեղ զօհերուն համար, եւ աչքերս փորձեցի փակել:

Յաջորդ օր երեկոյեան ուղղուեցանք «Չուարթինգ» օդակայան եւ ապա «Կանաչ լոյս» մը՝ այս անգամ մեկնելու:

Լուսանկարչական մեքենան քովս էր եւ պատրաստ վայելելու եւ անմահացնելու վիթխարի Արարատին տեսարանները: Կը բարձրանայինք, կը հեռանայինք Երեւանէն եւ ի վերջոյ Արարատէն: Երկար էր մեր ճամբան... դէպի Ամսթերամ:

«Լեւոն», հայերը զօրաւոր նկարագրի տէր եւ հետեւողական աշխատող էակներ են: Չարդը դիմագրաւած էք, բնականաբար այս աղէտն ալ պիտի յաջողիք դիմագրաւել», ըսաւ պատասխանատու օդաչու գործընկերս, տեսնելով, որ ամբողջ թռիչքին ընթացքին, խորունկ մտածումներու եւ ապրումներու մէջ էի:

Յաջորդ չորս տարիներուն շարունակեցի թռիչքներ կատարել՝ փոխադրելով զանազան տեսակի օժանդակութիւններ: Երբեք պիտի չմոռնամ այդ օրերու իմ հայրենակիցներու կորովն ու ուժը:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

ՄԵՐ ՈՒԺԸ ՄԵՐ ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ Ի

Խօսքը կը վերաբերի նախ մեր դարաշրջանը յատկորոշող խառն ժամանակներուն, ապա Հայաստանի եւ հայութեան առանձնայատուկ ու դժգոհ պայմաններուն համաձայն գործելու պարտաւորութեան, յատկապէս՝ այդ բոլորին դէմ յանդիման գործնապատշաճութիւնն ու նպատակասլացութիւնը համարտեղելու եւ, այդ առումով, հետեւողականութիւն ցուցաբերելու հրամայականին:

Իրենց գոյատեւման ու բազմակողմանի զարգացման երաշխիքները շատոնց ապահոված երկիրներն ու ժողովուրդներն անգամ, մեր օրերուն, լրջօրէն հաշուելի ակունքներն ու զարու խառն ժամանակներուն համահունչ գործելու պարտաւորութիւնը: Համաշխարհային Նոր կարգի միաբեւեռացումը ոչ միայն սպառնական համակարգութիւն է, այլեւ՝ արդէն իրականացած վտանգ, որուն դէմ պաշտպանուելու խնդիրը դարձած է որեւէ երկրի ու պետութեան թիւ 1 հարցը: Ընդհանրական այդ օրակարգը կը դիմագրորակեն մինչեւ անգամ միաբեւեռացումին դէմ շրջանային միադրման ուժ առաջացնելու ուղին ընտրած եւ, ամէն պարագայի, մրցակցութեան ասպարէզ դուրս գալու առարկայական եւ ենթակայական պայմանները ամբողջացնող ուժերը:

Հայաստանի ու հայութեան օրինակով փոքր անուններու պարագային, որոնք ղեկ չեն լուծած լինելիութեան մեծ խնդիրը, հակնախօրէն շատ աւելի ծանր ու բարդ է օրակարգը: Ոչ միայն շեշտակի կախալուծութեան մէջ ենք համաշխարհայնացման անիւր շարժող քաղաքական-տնտեսական եւ մշակութային-տեղեկատուական կառուցներէն, այլեւ՝ ամէն քայլափոխի ենթակայ ենք մեծերու մրցակցարարին ոտնակոխ դառնալու վտանգին:

Աւելի քան բնական է, հետեւաբար, որ հայ քաղաքական միտքը յաղթահարէ իր մէջ արմատաւորուած բացարձակապաշտութիւնը: Միաբեւեռ մտածողութեան ժամանակը շատոնց անցած է: Մէկ ու միակ ուղի դաւանելու ժամանակը՝ նոյնպէ՛ս: Եկած է խառն օրակարգի ժամանակը՝ միաժամանակ տարբեր քարտէսներու վրայ գործելու անհրաժեշտութիւնը շեշտելով, ինչպէ՛ս նաեւ՝ առաւելագոյն եւ նուազագոյն պահանջներու միջեւ ուժեղացող հաւասարակշռութիւն գտնելու ողջմտութիւնը պարտադրելով:

Վտանգը մեծ է, անշուշտ, որ նման խառն ժամանակներու եւ խառն օրակարգերու գոհ երթալ սկզբունքայնութիւնը, Ազգի ու Հայրենիքի սեփական իրաւունքներուն եւ հասարակական պատշաճութեան ու ձեռքբերման համար մղուող պայքարին նպատակասլացութիւնը: Այդ առումով ալ, առաւելագոյն եւ նուազագոյն պահանջներուն միջեւ ողջմիտ հաւասարակշռութեան նախապայմանը հետեւողականութիւնն է, ազգային-քաղաքական եւ գաղափարական-բարոյական արժէքները անխաթար պահպանելու յանձնարարականութիւնը:

Յատկապէս Դաշնակցութեան համար հիմնական կարեւորութիւն կը ներկայացնէ կրկնակի այս մարտահրաւերներուն ճիշդ դիմագրաւումը: Երբ խառն ժամանակներու պարտադրած խառն օրակարգին առջեւ կը գտնուին Ազգն ու Հայրենիքը, Դաշնակցութիւնը ամէն ժամանակէ աւելի նախանձախնդիր պիտի ըլլայ իր մէջ ուժ գտնելու եւ համագործելու յեղափոխական յանդիմանութեան եւ ազգային պատասխանատուութեան այն կրկնակ մղուումները, որոնք հունարեւոյց են մեր կուսակցութեան գործը առաջին իսկ օրէն:

Այսօր դժուար է գտնել Ազգի եւ Հայրենիքի ճակատագիրը յուզող որեւէ հիմնահարց, որուն լուծում գտնելու իմաստով առաւելագոյն սրութեամբ դրուած չըլլան երկրորդականները առաւելագոյնի եւ նուազագոյնի, մերժողականութեան եւ համակերպումին, բաղձալիին եւ հնարաւորին միջեւ:

Այդպիսին է, օրինակ, Հայ Դատի պայքարի ճակատին վրայ, Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ դատապարտումը ապահովելու հարցը: Բնականաբար չենք կրնար բաւարարուել սոսկ գործըւած ոճիրին ճանաչումով ու դատապարտումով, որովհետեւ ատկէ անդին հայ ժողովուրդին համար դոյուքութիւն ունին ոչ միայն մարդկային ու նիւթական հատուցման պահանջներ, այլեւ՝ կայ աւելի հիմնականը, արդարութեան վերականգնման բուն խնդիրը: Ի վերջոյ, ազգաբնակչութիւնն է կործանուած ու հայրենիք է բռնազրուած, որոնց վերականգնումը անժամանցելի պահանջ է արդար իրաւունք է: Իսկ միջազգային բեմի վրայ իշխող տրամադրութիւնները այնպիսին են, որ հայանպատեղ զիրբորոշման հիմնարկ պատճառէն ուսեցող երկիրներն անգամ հագուածէ պօրէն տրամադրութիւն ցոյց կու տան Հայկական Յեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումն անդին անցնելու՝ Թուրքիոյ հետ իրենց յարաբերութիւնները ամբողջովին

չփճացնելու հաշուարկով: Աւելի՛ն. նոյնիքն Հայաստանի իշխանութիւնները, մինչեւ 1998ի իշխանափոխութիւնը, վերանկայացեալ մեր պետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ չէին ուզեր տեղ տալ մինչեւ անգամ Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտումը ապահովելու աշխատանքին, ո՛րք մնաց հայ ժողովուրդի արդարադի պահանջներուն, որոնք իբրեւ «դաշնակցական ուղղութիւն» խճճանքի կ'ենթարկուէին ատենի պաշտօնական բանբերներու կողմէ: Հետեւաբար, երբ Հայաստանի ներկայ իշխանութիւնները պաշտօնապէս իրենց օրակարգին վրայ կը բերեն Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտումը ապահովելու աշխատանքը, բայց դէմ կ'արտայայտուին, օրինակ, հայոց հողային պահանջատրութեան պետականօրէն արժանացումին, հայ քաղաքական միտքը ըստ ամենայնի կը դրուի խառն օրակարգի առջեւ՝ առաւելագոյնի եւ նուազագոյնի միջեւ յարմարագոյն համարումը գտնելու իմաստով:

Նոյնը կարելի է ըսել, դարձեալ Հայ Դատի պայքարի ճակատին վրայ, ընդհանրապէս հայութեանը երկխօսութեան եւ մանաւանդ Հայաստան - Թուրքիա միջպետական բնականոն յարաբերութեանց հաստատումին: Միաժամանակ, սակայն, կարելի է իբրեւ երկխօսութիւն ընկալել եւ ընդունել մուծ պայմաններու մէջ կարգուած «Թուրքիա-Հայ Հաշտեցում Յանձնաժողով»ներու գործունէութիւնը, երբ Հայկական Յեղասպանութեան անհրաժեշտ ճշմարտութիւնը վիճարկելու կը ծառայեն անոնք: Նոյնպէս չի կրնար քաջալերանքի արժանանալ Հայաստան-Թուրքիա բնականոն յարաբերութեանց հաստատումը այնքան ատեն, որ Թուրքիա նախ՝ կը շարունակէ թշնամական վերաբերում ունենալ եւ այս կամ այն առումով շրջափակման մէջ պահել մեր երկիրը, ապա՝ բարի-դրացիական յարաբերութեանց համար իբրեւ զին կը պարտաւորեցնէ դադրեցնել Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտումը ապահովելու Հայաստանի պետական քաղաքականութիւնը:

Արցախեան Հարցի բանակցային կարգաւորման օրակարգը եւս կը կրէ խառն ժամանակներու եւ դժուարին ընտրանքներու կնիքը: Չորդ դարուն հանրապարտագիր օրէնք հռչակուած է ազգամիջեան եւ քաղաքական հարցերուն փոխ-զիջումներով խաղող կարգաւորում գտնելու աշխատակարգը: Մեծապետական ուժերը միայն իրենց վերապահած են հանրապարտագիր իր օրէնքին իւրովի մեկնաբանութիւնն ու կիրարկումը, ի՞նչ խախտումը: Այս առումով ալ, Արցախեան Հարցի խաղող կարգաւորման համար մեծերուն առաջադրած լուծումները քաղաքական դժուարին երկրորդականները առջեւ կը դնեն Հայաստանն ու Արցախը: Ինչպէ՛ս կարելի է մերժել, բանակցութեանց ընթացքին առաջադրուած, Հայաստանի ու Արցախի վերամիացման միջազգային իրականական ճանաչումը՝ թէ՛ եւ միայն Լաչինի անցքով: Միաժամանակ, սակայն, ինչպէ՛ս կարելի է ընդունել, որ թանկագին եւ անփոխարինելի արեամբ ազատագրուած հայրենի տարածքներու զիջումը, իբրեւ զին, պարտադրուել հայ ժողովուրդին: Հայ քաղաքական միտքը դարձեալ խուսափում չունի բաղձալիին եւ հնարաւորին միջեւ լաւագոյն հաւասարակշռութիւնը գտնելու եւ իրագործելու իր պարտաւորութեանն:

Արհամարհելի է խառն օրակարգով գործելու պարտաւորութիւնը նաեւ Հայաստանի ներքաղաքական դաշտին վրայ:

Սկիւնք մեծագոյն հարցն է, որ վերանկայացեալ Հայաստանի եւ հայութեան լաւագոյն ծառայող հասարակարգի ընտրութեան կը վերաբերի: Խորհրդային ամբողջատիրական կենսափոքր հիմնովին վարկարեկեց «սոցիալիստական» հասարակարգը՝ զգուսեք առաջացնելով նոյնիսկ ընկերութիւնն ըստին նկատմամբ: Մէկ ծայրայեղութենէն միւսին գիրկը նետուած մեր ժողովուրդը թէ՛ եւ շուտ անդրադարձազործուած սխալին ու աւերին, բայց այսօր արդէն անկախ են միջազգային պարտաւորութիւններով ղեկավարուող Հայաստանի մէջ ձեւաւորուած է դրամատիրական հիմունքով ի դէպ, յոռեգոյն տեսակի «փողոն ու պատուիրատու» կ'որոշեն եղանակը՝ սկզբունքով՝ հասարակարգ մը: Կասկածէ վեր է, որ ընկերային-տնտեսական առումով զգտնուած Հայաստանն ու հայութիւնը չեն կրնար երկար ճամբայ կորել առանց ընկերային արդարութեան ծառայող արմատական եւ շուտափոյթ քայլերու

(օրէնքներ, կառույցներ եւ քաղաքականութիւններ), որոնց շնորհիւ միայն կարելի է ընկերային ծայրայեղ բեւեռացման ու հակադրութեան ներկայ վիճակին դարձման մասին կարելի է խօսիլ երկրի մը մէջ, ուր մեծ չափով անդամալոյծ է արդիւնաբերութիւնը, հսկայական տոկոս կը կազմէ անգործութիւնը եւ իշխանաւոր (օրինական թէ ստուերային) չնչին փոքրամասնութիւն մը իր ձեռքը կեդրոնացուցած է, անբեւեռացելի համեմատութեամբ, երկրի դրամագույնը (դրամ, ինչք, արտադրամիջոց): Անցեալի ճոխ սեղաններուն (անշուշտ, յարաբերական իմաստով) վերադարձը անկասկած ցնորք է: Բայց ցնորք չէ եւ, ի վերջոյ, իրականանալի է ընկերային արդար բաշխումի վրայ հիմնուած տնտեսական աճի ռազմավարութիւն մը, որուն յաջողութեան գրականաններն են ստուերային մենաշնորհներու արգիլումը, շահատուքներու արդար դրութեան կիրարկումն ու փտածութեան դէմ բազմաճակատ պայքարը: Կը նշանակէ, որ իբրեւ ընկերավարական կուսակցութիւն, Դաշնակցութիւնը կոչուած է աշխատելու խառն օրակարգով՝ տնտեսական աճն ու աշխատատեղիներու ընդլայնումը ապահովող, բայց միաժամանակ շահերու արդար բաշխումը երաշխաւորող կառավարման այլ ընտրանքային համակարգ ձեւաւորելու նպատակով:

Իտէլականներն եւ իրականանալիին միջեւ հեռավորութիւնը իրամատի վերածուած է եւ յանգած է հակադրութեան յատկապէս Հայաստանի Հանրապետութիւնը ժողովրդավարական կարգերով օժտելու կոչուած սահմանադրական բարեկարգումներու ճակատին վրայ: Արդէն շիկացած է յարուածութիւնը Հայաստանի սահմանադրութեան բարեկարգման կիսանախագահական եւ խորհրդարանական նախագիծերու կողմնակիցներուն միջեւ, հակառակ անոր որ ժողովրդավարութիւնը երաշխաւորելու առումով երկու ուղիներն ալ կրնան միեւնոյն նպատակին առաջնորդել, եթէ՛ հունարուած են երեք իշխանութեանց միջեւ հաւասարակշռուած հակակշիռ հաստատելու սկզբունքով: Խառն օրակարգի առջեւ կը գտնուին նաեւ այս ճակատին վրայ, որովհետեւ դաշնակցական մտածողութեան մէջ իտէլական կը նկատուի գործադիր իշխանութեան ձեւաւորումը օրէնսդիրին կողմէ, իսկ Հայաստանի Հանրապետութեան այսօրւան իրականութիւնը շատ հեռու է իրապէս ժողովուրդին կողմէ ընտրուած օրէնսդիր իշխանութիւնը ձեւաւորելու հնարաւորութեանն: Իտէլականներն առաջնորդող յարմարագոյն ուղին ընտրելու խնդիր ունինք մեր առջեւ եւ չի բացառուիր, որ առկայ նախագահական իշխանութեան համակարգը աստիճանաբար Ազգային ժողովի հակակշիռն ենթարկելը հանդիսանալ կարելի ժողովրդավարացման ելքը:

Խառն օրակարգ կը դիմագրուենք նաեւ այլ ճակատներու վրայ, որոնց յիշատակումն իսկ բաւարար է, անդրադառնալու համար դժուար ընտրանքներու հարցին իսկապէս ծանր տարողութեան: Այդպիսին է, օրինակ, փտածութեան դէմ պայքարը, ուր մէկ կողմէ կայ միաժամանակ իշխանութեանց մէջէն եւ դուրսէն համակարգուած գործուն ընտանքը, իսկ միւս կողմէ առաջադրուած է այն ընտրանքը, թէ՛ անբարեյոյս են ներկայ իշխանութիւնները եւ անհրաժեշտ է անոնց հետ ամբողջական հակադրութեան ճամբով յաղթահարել շարիքը: Նոյնպէս խառն օրակարգ կը պարտադրէ Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց եւ համագործակցութեան կարգաւորումը: Փոխադարձ ճանաչողութեան եւ փոխմթերման անհրաժեշտութիւնը ընդունելով հանդերձ՝ Հայաստանն ու Սփիւռքը տակաւին շատ հեռու են առաջնահերթութեանց ընդհանուր յայտարարի մը շուրջ համախմբուելէ եւ համապատասխան աշխատանքի, դերերու եւ դիրքերու բաժանում ու դասաւորում կատարելէ:

Անշուշտ առանձին քննարկում կը պահանջէ յիշատակուած հարցերէն իւրաքանչիւրը, բաղձալի եւ հնարաւոր սահմաններուն լայն ընդգրկումով, որպէսզի հայ քաղաքական միտքը աստիճանաբար յաղթահարէ կարգախօսներու գերին դարձած ըլլալու իր ներկայ վիճակը: Իսկ դաշնակցական միտքը անդէն հիմք ունի, որպէսզի առաւելագոյն ներդրումը բերէ խառն ժամանակներու պարտադրած բարդ օրակարգին հայկական լուծումներ գտնելու աշխատանքին՝ ողջմտութեան եւ նպատակասլացութեան իր ուղին հարկելով:

Կարեւոր կարելին իրականացնելու եւ բաղձալիին հասնելու համար հնարաւորութիւններու դաշտը ընդլայնելու վճռականութիւնն է:

Մեր ուժը մեր հետեւողականութեան մէջ է:

«ԳՐՕՇԱԿ»

ՀԱՐՅԱԶՐՈՅՑ՝ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԱՄՅԽԷ - ԶԱՒԱԽՔԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԲԱԲԳԷՆ ԱԲԵՂԱՅ ՍԱԼԻՊԵԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՅՈՒՄ.- Ե՞րբ է ստեղծուել Սամցխէ - Զաւախքի առաջնորդական փոխանորդարանը: ՊԱՏԱՍԽԱՆ.- Սամցխէ - Զաւախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդարանը ստեղծուել է Ամենայն հայոց Գարեդին Բ. կաթողիկոսի բարձր կարգադրութեամբ 2001 թուականի Յունուարի 6ին: Նպատակն է եղել աշխուժացնել տարածքում գտնուող վաղուց փակուած եկեղեցիներն ու արթնացնել:

Հ.- Արդե՞մ մէկ տարուան ընթացքում որեւէ փակ եկեղեցի վերաբացուել է: Պ.- Մեր նշանակումից այս կողմ բացուել է մէկ եկեղեցի՝ Ախալբալաքի շրջանի Արագովայի Ս. Կուսանաց եկեղեցին: Վերաբացուել են երկուսը՝ Ծալկայի շրջանի կարմրավանքի (Ղըզթիլիսա) Ս. Աստուածածին եւ Ախալբալաքի շրջանի Չամուրայի Ս. Սարգիս եկեղեցիները:

Հ.- Իսկ ինչպիսի՞նք էր եկեղեցու վիճակը եւ հոգեւոր կեանքը Սամցխէ-Զաւախքում 2001 թուականի Յունուարին:

Պ.- 2001 թուականին, երբ եկանք Զաւախք, մեծ դժուարութիւնների առջեւ կանգնեցինք: Պարզուց, որ եկեղեցիներում չկային երգչախմբեր, չկային կիրականօրեայ հոգեւոր դպրոցներ, համայնքները գտնուում էին քայքայուած վիճակի մէջ: Երկար տարիների ընկերային-տնտեսական ծանր վիճակը իր կնիքն էր թողել նաեւ հոգեւոր կեանքի վրայ: Երկտարականութեան բացակայութիւնը, ճանապարհների անմխիթար վիճակը եւ այլ ընկերային-տնտեսական շարցեր էլ աւելի են դժուարացնում եկեղեցու առջեւ ծագած խնդիրները: Այսօր ամբողջ տարածքում եկեղեցին չունի մի փոքրիկ գրասենեակ կամ հովուատուն, որպէսզի կարողանայ իրականացնել իր աշխատանքները: Եկեղեցիները կարիք ունեն նորոգութեան, չկան հոգեւոր սպասարարներ (սարկաւազաց դաս): Այսօր, փառք Աստծոյ, Աստծոյ ողորմութեամբ կամայ-կամաց հնարաւոր է լինում յաղթահարել այս դժուարութիւնների որոշ մասը:

Հ.- Եկեղեցիք բարեգործութեամբ զբաղու՞մ է: Պ.- Չնայած եկեղեցին գտնուում է նիւթական ծանր վիճակում, սակայն չի մոռանում իր հաւատացեալ հօտին, եւ այս դժուարին պայմաններում գտնում է միջոցներ օգնելու որբերին, կարիքաւորներին եւ միայնակ ծերերին:

Հ.- Կա՞ն արդե՞ք բարեգործներ, որոնք ցանկանում են օգնել եկեղեցու:

Պ.- Փառք Աստծոյ, գտնուեցին նաեւ բարեգործներ, որոնց նիւթական միջոցներով վերանորոգուեցին եկեղեցիները եւ հնարաւոր եղաւ որոշ եկեղեցական սպաք ձեռք բերել: Նաեւ եղան անհատներ, որոնք ստանձնեցին եկեղեցական երգչախմբի հովանաւորութիւնը: Եւ այսօր, օգտուելով առիթից ձեր լրատուական կենտրոնի միջոցով ցանկանում ենք մեր շնորհակալութիւնները յայտնել նրանց՝ յանձնապարոն Եուրա Եայախանեանի, մոսկուաբնակ ջաւախքցիներ պարոնայք Էտուարտ եւ Շալուա Արամեան եղբայրների, ինչպէս նաեւ պարոն Գաղիկ Քոչարեանի:

Հ.- Եկեղեցական ի՞նչ միջոցառումներ էք ձեռնարկում:

Պ.- Անցեալ տարի առաջին անգամ մեծ շուքով նշեցինք Զատիկի տօնը Զաւախք աշխարհում, կազմակերպեցինք մանուկների օրհնութեան օրը, եւ այդ ծրագրի շրջանակներում մօտ 85 երեխայ մկրտեցինք եւ ուղարկեցինք Հայաստանի տարբեր ճամբարներ հանգստանալու: Առաջին անգամ եկեղեցում մեծ շուքով նշեցինք Վարդանանց եւ Ղեւոնդեանց տօները: Կազմակերպեցինք մի քանի ուխտագնացութիւններ տարբեր եկեղեցիներ եւ տարին եզրափակեցինք Ս. Ծննդեան տօների տօնակատարութեամբ:

Հ.- Իսկ ի՞նչ յարաբերութիւններ ձեռք էք տեղի քոյր եկեղեցիների հետ:

Պ.- Այսօր բարեխառաբար յարաբերութիւններ են մշակուում նաեւ տարածքում գործող քոյր եկեղեցիների հետ՝ յանձնա կաթողիկ եկեղեցու եւ վրաց եկեղեցիներ ընթացքում շրջանում գործող քոյր եկեղեցիները մի տեսակ սառը վերաբերմունք էին որդեգրել իրար նկատմամբ, սակայն, բարեխառաբար, այժմ վիճակը փոխուել է, եւ արդէն ջերմութիւն կայ ինչպէս եկեղեցիների հոգեւոր սպասարարների, այնպէս էլ հաւատացեալ հօտերի միջեւ: Եւ մենք պէտք է հետամուտ լինենք, որ այդ եղբայրական հօգին էլ աւելի ամրանայ:

Հ.- Դուք խօսեցիք կիրակօրեայ դպրոցների մասին: Ի՞նչ աշխատանքներ են տարւում այդ ուղղութեամբ:

Պ.- Մեր նշանակման այս կարճ ժամանակահատուածում աշխատանքներ ձեռնարկեցինք նաեւ այդ ուղղութեամբ: Տեղի իշխանութիւնների հետ միասին փորձում ենք ստեղծել մի փոքրիկ կիրականօրեայ դպրոց, որը մեր մատաղ սերունդին հաղորդակից կը դարձնի իրենց պապերի հոգեւոր ժառանգութեանը: Զաւախքի փոխ եկեղեցիների հոգեւոր սպասարարների, այնպէս էլ հաւատացեալ հօտերի միջեւ: Եւ մենք պէտք է հետամուտ լինենք, որ այդ եղբայրական հօգին էլ աւելի ամրանայ:

«Ա.- ԻՆՅՕ»

# Մշակութային Էջ


## ԻԲՐԵԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մեր օրերուն, մրցակցութեան այս դաժան ժամանակաշրջանին, եւրոպական քաղաքներու մէջ գործեր ցուցադրելու եւ բարձր գնահատանքներու արժանանալը մեծ բան կը նշանակէ:

Սակայն մեզի համար օտար արուեստաբաններու կարծիքները ոչինչ պիտի նշանակէին, եթէ երբեք հաղորդակից չդառնայինք Աննա Յարուսթիւնեանի վերացական եւ կիսավերացական շարք մը ստեղծագործութիւններուն, որոնք հասուն արուեստագէտի մը տպաւորութիւնը կը ձգեն մեր վրայ, հակառակ անոր որ անոնց հեղինակը հազիւ 25 տարեկան է:

Ստեղծագործական ներքին տիկամիզով օժտուած այս գեղանկարչուհին ծնած է Երբեք ֆոթո տարիքին յաճախեց ետք Երեւանի գեղարուեստի Ակադեմիային գեղանկարչական բաժնի, որուն 5 տարեան ծրագիրը կ'աւարտէ 3 տարին եւ 2000 թ ու ա կ ա ն ի ն կ'արժանանայ «բացառութեան կարգով» վկայականի:

Կարճ ժամանակի ընթացքին Աննա Յարուսթիւնեան կը դառնայ Գերմանիոյ Երիտասարդ սերունդի հանրածանօթ գեղանկարչուհիներէն մէկը: 1997ին Փուլհայմի մէջ տեղի ունեցած «Երիտասարդ յառաջդէմ նկարչներու» մրցոյթ - ցուցահանդէսին ան կ'ընտրուի տարուան քանի մը լաւագոյն նկարչներէն մէկը: Նոյն տարին կը դառնայ Քէօլն քաղաքի գեղանկարչներու միութեան անդամ, իսկ տարի



«Բաբելոնի մնացորդներ»

մը զանազան վարպետներու արուեստանոցները յաճախեց եւ գերմանական տարրեր քաղաքներու մէջ (Տիւրէն, Քէօլն, Փուլհայմ...) ըստմասիւ ցուցահանդէսներ տալէ ետք, 1997ին կ'ընդունուի Քէօլնի արուսթիւնեանի մէջ գտնուող Նորթ-Ռայն Վեստֆալիի Գեղարուեստի Ակադեմիային գեղանկարչական բաժնի, որուն 5 տարեան ծրագիրը կ'աւարտէ 3 տարին եւ 2000 թ ու ա կ ա ն ի ն կ'արժանանայ «բացառութեան կարգով» վկայականի:

Կարճ ժամանակի ընթացքին Աննա Յարուսթիւնեան կը դառնայ Գերմանիոյ Երիտասարդ սերունդի հանրածանօթ գեղանկարչուհիներէն մէկը: 1997ին Փուլհայմի մէջ տեղի ունեցած «Երիտասարդ յառաջդէմ նկարչներու» մրցոյթ - ցուցահանդէսին ան կ'ընտրուի տարուան քանի մը լաւագոյն նկարչներէն մէկը: Նոյն տարին կը դառնայ Քէօլն քաղաքի գեղանկարչներու միութեան անդամ, իսկ տարի

## ՀԱՅՐԵՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՅԱՐՈՒՅԻՆ ԱՂԱԶԱՆԵԱՆ

Վերացարկուած կերպարները, անոնք ըլլան գեղջկուհիներ, ձուկեր թէ ծաղիկներ, ժողովրդական (ֆոլկլորային) երանգ մը կը զգենուն հայրենի երիտասարդ գեղանկարիչ Յարուսթիւն Աղաջանեանի ստեղծագործութիւններուն մէջ:

Աղաջանեան ծնած է 1956ին, Թեհրանի մէջ: 1961ին ընտանեօք կը տեղափոխուին Հայրենիք, ուր փոքր տարիքէն կը սկսի մասնակցել գեղանկարչական աշակերտական զանազան խմբակներու գեղարուեստական գործունէութիւններուն: Անոր առաջին ուսուցիչը կ'ըլլայ իր հօրեղբայրը՝ ծանօթ թուրքական արուեստագէտ Սերգէյ Աղաջանեան:



«Ընտանիք». գործ՝ Յարուսթիւն Աղաջանեանի:

1999 եւ 2000 թուականներուն Աղաջանեան կը կազմակերպէ երկու ցուցահանդէսներ, Այնճարի եւ Պէյրութի մէջ: Ան կը մասնակցի նաեւ քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօն հռչակման 1700ամեակի ձեռնարկներու շարքին Տուրքիոյ մէջ կազմակերպուած ցուցահանդէսին: Աղաջանեանի գեղարուեստական հաստատման մէջ զգալի առաւելագոյն անկեղծութեան: Ան յաջող

## ԱՐՈՒԵՍԻ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ...

Արկածախնդրութիւնը արուեստի մէջ վերապահուած է ինքնավար ու համարձակ տաղանդներու: Այս վերջիններէն է հայրենի գեղանկարչներէն ԷՆՐԻԿ ԷԼԻԲԵԿԵԱՆԸ:

Ան բառին ամբողջական իմաստով կերպարուեստագետ է: Ստորեւ տրուած ակնարկը ընդհանուր գաղափար մը կու տայ այս ուշագրաւ արուեստագետին մասին:

Չափազանց ընդարձակ են Հէնրի Էլիբեկեանի ստեղծագործական ընդգրկումները: Չկայ արուեստի որեւէ տեսակ կամ ժանր, որին անդրադարձած չլինի նկարիչը: Բայց եթէ հարկ լինի մէկ բառով բնութագրել նրա ստեղծագործութիւնը, ապա ճիշդ կը լինի այն կոչել կերպընկալ նոր միջոցների, նոր արտայայտչաձեւերի որոնում: Այդ իսկ պատճառով նա փորձարկում եւ համադրում է տարբեր արուեստները: Ստեղծագործական նմանօրինակ հասկացողութեան դիպուկ կերպով բնութագրում է խորհրդային հանրայայտ արուեստաբան, նոր եւ նորագոյն արուեստի տեսարան փորձ. Դ. Սարաբեանովը. «Հէնրի Էլիբեկեանի ստեղծագործութեան մէջ գաղափարներն իմաստն են զուգահեյտում գեղանկարչութիւնը, քանդակը, ճարտարապետութիւնը, բեմահարթակը, զգեստը, մեզ շրջապատող իրերն ու առարկաները: Այդ համադրումից ծնւում է տարածական արտայայտչաձեւերի որոնում: Այդ իսկ պատճառով նա միշտ որոնել եւ յայտն էլ որոնում է նոր համադրումներ: Փնտրում է ոչ նրա համար, որ չի գտնում, այլ որովհետեւ գտնում է եւ գտնելով հանդերձ անմիջապէս իրագործում: Հէնրիին չափն նկարիչ է: Եւ ապրում է ոչ թէ ստեղծողով, այլ ստեղծուելովով: Եւ շնորհիւ դրա նա դեռեւս շատ բան ունի գտնելու»:

Նոր ձեւերի նկատմամբ ունեցած նկարչի ձգտումը ի յայտ եկած դեռեւս նրա ստեղծագործական առաջին քայլերում: 1960ական թուականներին արդէն Էլիբեկեանը հանդէս է գալիս գծանկարիչ եւ գեղանկարիչ, ձեւաւորող ու քանդակագործ: Հետագայում նրան հնարաւորութիւն է ընձեռուած աշխատելու նաեւ բեմանկարչութեան բնագաւառում: Այսպէս, համարեա միաժամանակ, նրա կողմից իւրացնելի կերպարուեստի ընդարձակումը: Այդ շրջանի գործերում հիմնական դիտողի մօտ ազդեցութիւնը աշխուժացնելու, տեսողական պատկերին մեծ արտայայտչականութիւն հաղորդելու միտումն է: Նրա դեղանկարչութիւնն էլ իր մէջ կրում էր գծանկարչական կամ էլ քանդակային լուծում: Առաջին դէպքում դա բնում էր գծանկարչական ձեւերից, իսկ երկրորդում՝ դառնում շոշափուող, «մակերեսութեան», իսկ ծորուն եւ թանձրացնող վրձնահարուածները ստեղծագործութեանը հաղորդում էին ձեւի այն հպումները, որ բնորոշ է կերպընկալ արուեստին: Հետզհետէ նկարիչը սկսեց գունապատել քանդակը՝ նրա արտաքին շերտը ծածկելով իր գեղանկարչական աշխատանքների ոգով: Այդ թուերին էլ նրա համադրումներուն գրաւուցելու զանազան կաղապարներ թիթեռնիկներ, ձկներ եւ այլ առարկաներ, որոնք մակերեսային լուծմամբ շարկապատելու գեղանկարչական ողջ համակարգի հետ: Հէնց այդ ժամանակ էլ Էլիբեկեանը ստեղծեց իր արուեստի նմուշ համադրումները: Դրանք տարածական գեղանկարչութեամբ վերաբերուած արկներ են, որոնցում տեղադրուած են քանդակներն ու առարկաները: Ըստ մտայնացման այդ «արկները» պէտք է պտտուեն ու լուսաւորուեն: Դա կատարելապէս մի նկարչի կողմից ստեղծուած միջինարտուն է:

1970ական թուականներին Էլիբեկեանը սկսում է գուգորդել գեղանկարչութիւնն ու քանդակը: Այսինքն՝ բոլորաքանակը երկթեւում է գեղանկարչական երկանկար, իսկ գեղանկարչական մակերեսին վերադրում մակերեսայինը: Եւ այսպէս, ի յայտ է գալիս նաեւ համութեան ընդ մի կոմբոլիցիա, որն իր մէջ համադրում է գեղանկարչական ու քանդակը, յատուկ առարկաներն ու փակցանկարը:

Ներկայումս նկարիչը նախատեսել է խմբային քանդակ փոխարինել շարժուող մոտեկով: Դա կարող է լինել իր մակերեսային ռեժիմով գունազարդուած մարդու մարմին եւ կամ՝ մէկ ընդհանուր կերպընկալ ձեւի լուծում ունեցող արհեստական շարժուող մոտեկ: Շարժում մտցնելու յօրինուածքում Էլիբեկեանը իր արուեստն է ներմուծում մի նոր չափում՝ ժամանակը, ստեղծելով գեղանկարչապատկերական մի գործողութիւն, որը ժամանակային արուեստը կերպարուեստաարածականի հետ համադրելով, մերձեցնում է թատրոնին: Նման մօտեցման դէպքում ամէն ինչ, ընդհուպ կերպարների շարժումը, դառնում է նկարիչ անհատի միանմանայ արտայայտման իւրօրինակ միջոց: Նման արուեստում զգացում է ստեղծագործութեան բուն ընթացքը հնարաւորին չափ բացայայտելու, «մերկայանելու» ցանկութիւն: Այսպիսի արուեստի, այսպիսի «կերպարներ» (ժամանակատարածական) ցուցադրումը դժուարութիւնների հետ է կապուած, քանզի, ժամանակի իմաստով, դա սահմանափակ արուեստ է ժամանակահատուածի արուեստ:

Արուեստի համադրման ոլորտում կատարուած փորձարարութիւններին հետ միաժամանակ Էլիբեկեանը աշխատում է կերպարուեստի առանձին տեսակներում:

Քանդակում Էլիբեկեանը դիմում է դիւրամշակելի հայկական տուֆին, ինչպէս նաեւ կաւին, փայտին ու մետաղին: Յաճախ նաեւ երանգաւորման, գունաւորման ու մակերեսների բարդ մշակմանը: Նրա քանդակները ինքնապարփակ չեն այլ կարծես բացուած են դրսից: Հեղինակը ձգտում է ցոյց տալ այն, ինչը ներսում է եւ դէպի տարածութիւն մղել հէնց ներսը: Այդ իսկ պատճառով նա երկրաչափական պարզ ձեւերը կոտորակում է, ճկում՝ ստանալով առաւել բարդ ու բազմաթիւ ձեւեր: Նրա քանդակները առանձնանում են պլանների հարստութեամբ ու դիտակէտերով գանգուածի բազմաշառնակութեամբ, ձեւախաղերով («Լողացող կին», 1982): Նրան առանձնապէս հոգեհարազատ են օդառատ, տարածական ծաւալաձեւերը: Նման համադրումներով տարածականութիւնը հանդէս է գալիս որպէս հիմնական տարր («Մետաղեայ կոնստրուկցիա», 1982):

Գծանկարում Էլիբեկեանը աշխատում է շարժերով, զանազան հեղինակային խառը հնարներով: Իւրաքանչիւր շարք ունի իր խնդիրը՝ առաւելագոյն օգտագործել տուեալ արհեստագիտութեան արտայայտչական հնարաւորութիւնները: Առաջին անգամ գծանկարային այդ շարժերն ի յայտ եկան Էլիբեկեանի նկարչի թեմաներից շատերը, որոնք հետագայում գրաւեցին իրենց հաստատուն տեղը նրա ողջ ստեղծագործութեան մէջ («Մարդիկ եւ դիմանկեր», «Թռչող քանդակներ», «Պառկած կանայք», «Պատերազմի արհաւիրքներ»):

Էլիբեկեանի ստեղծագործութեան մէջ առանձնակի տեղ է գրաւում բեմանկարչութիւնը: Աշխատելով Երեւանի տարրեր թատրոններում, նկարչի ի սկզբանէ համադրական արուեստին ձգտող «թատրոնական» մտածողութիւնը հնարաւորութիւն տուեց ստեղծելու հայկական արուեստի համար կերպարայնացուած ծրագրով առաջնորդող բեմանկարչութիւն: Նա երբեք չի նկարում բեմականացման արդիւր հանդիսանքային գեղանկարչական ձեւաւորումներ, այլ ձգտում է բեմանկարչութեան միջոցներով, համաձայնարար ստույգ, յստակ հաղորդել բեմանկարչի մտայնացմանը: Ընդ որում նկարչական եւ կառուցուածքային համակարգերը կոչուած են ձեւաւորելու ներկայացման յուզական ու կերպարային միջոցներով («Երկիր Նայիրի», 1977), որչափ էլ զբաղանքի շարժումները բեմում («Խաթաբա», 1978) ներառնելու իր մէջ հէնց գործող անձանց կերպարները («Լույսի համանուագ», 1976): Առանձնապէս պէտք է նշել Էլիբեկեանի գործող անձանց ձեւերն ու զգեստները մարմնակերպութեանը, որոնք հանդէս են գալիս որպէս միջնակայ թատերական նշանակների եւ քանդակի միջոց: Դրանք, որպէս սեփական խառնուածքներով օժտուած երանգային կերպարներ, ունեն իրենց գեղարուեստական ինքնուրոյն արժէքը:

Նոր ձեւերի արտայայտչականութեան որոնումները միշտ էլ ուղեկցել են նկարչի աշխարհայացքի ու գեղագիտական ըմբռնումներին: Հ. Էլիբեկեանի արուեստը գեղեցիկի գովերգում չէ, չնայած քիչ չեն նրա եւ գեղեցիկ աշխատանքները: Էլիբեկեանը ձգտում է աշխարհի բարդութիւններն ու հակադրութիւններին, նրա բազմակերպութեան ու բազմաշառնակութեան արտայայտման: Այդ ձգտումը ձեւաւորում է մի կերպար, որը լի է դրամատիկ, պոռթկուն, ներքին ուժով լի, գործուն ազդակներով: Անհատականութեան բարդութիւնը ցայտուն կերպով դրսևորուել է նկարչի դիմանկարներում, դիմանկարներ, որոնք առանձնապիտակ ընդգծում են նկարչի տաղանդը: Ուշակույթի (1973) եւ իգիթեանի (1976) խիստ հոգեբանական դիմանկարները լուծուած են գեղանկարչական մակերեսի կապտակարմրուած թուրքով, իսկ մերձաւորներն ու մտերմները վսեմաշունչ, մեղմ կերպարներուն կիրառուած է լուսանցիկ գեղանկարչութիւն՝ մէկ արժաթին տուող դեղանկանաչաւուն, մէկ էլ՝ կաթնավարդագոյն գուներակներով թափանցիկութեամբ: Բախումներով լի են նրա համադրումները, որտեղ երկակիքների պայթարը բաւականին դրամատիկ է: Իրական տարածութեան մէջ տարրեր արուեստների համադրումն ու յատուկ առարկաների օգտագործումը թույլ են տալիս դիտողին դառնալ այդ պայթարի մասնակից («Կարպետների շարժումը», 1971, «Չարեց», 1980, «Փիթաս», 1981):

Մեր օրերի հակասութիւնները, գոյութեան հակադրութիւնները չեն կարող նկարչին անտարբեր թողնել: Դրանք Էլիբեկեանի մօտ առաջնանում են բողբոջ ընդդէմ գեղեցկամոլութեան: Նա իր արուեստի առարկան է դարձնում ապագեցիկը՝ կանաչի առուրնի ներփակութիւնը՝ ցուցադրելով հեմար նրա ցուտ կողմերը: «Մարդիկ եւ դիմանկեր», «Պատերազմի արհաւիրքները», «1915 թիւ», «Վիշտը», «Գագո-ճախ» եւ ուրիշ շատ սուր արտայայտչականութեամբ բնորոշուող ստեղծագործութիւններ իրենց սոսկուծի մերկութեամբ մարդկանց մօտ առաջնանում են կերպարների զգացում եւ աւերիչ ուժերի դէմ պայքարելու ցանկութիւն:

Հ. Էլիբեկեանի արուեստը աւանդական չէ: Այն հետաքրքիր է հէնց կերպարուեստի նոր հնարաւորութիւններին որոնման իմաստով: Նկարչը իրեն յատուկ կրթութեամբ է արձագանգում 20րդ դարի շրջ կէսի խնդիրներին, որոնք միայն նոր արտայայտչաձեւերով է հնարաւոր վերածել արուեստի գործերի: Եւ դա էլիբեկեանի արուեստը դարձնում է խիստ արդիական, կապում ժամանակակից գեղարուեստական մտածողութեան հետ եւ նրա ստեղծագործութեանը հաղորդում համադրակային բնոյթ:






# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ

### ՆՐՇՄԵ - Հ. Մ. Ը. Մ.՝ 5-2

Լիբանանի ֆուտբոլի ֆուտբոլիստների 14րդ ելուցակի առաջին հանգրուանի մրցումներում, երկ **Հ. Մ. Ը. Մ.** ֆուտբոլի ներկայացուցչական կապը կրեց եղանակի իր 11րդ պարտությունը, երբ Մարպական Ասանի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին 5-2 արդիւնքով պարտուեցաւ Նրժմէին (կիսախաղ՝ 0-0):

Ա. կիսախաղին, երկու կապներն ալ գրեթէ յիշատակելի ոչինչ կրցան ընել, բայց աւելի յստակ էր Նրժմէի տիրապետութիւնը, հակառակ անոր, որ Սաֆօ Էսքիճեանի բերոր այդքան ալ չէր վտանգուեր:

Բ. կիսախաղին առաջին իսկ վայրկեանին, Նրժմէ նշանակեց իր առաջին կոլը, շնորհիւ՝ Պիլալ Ֆլէյֆէլի: Նրժմէի համակիրներուն ուրախութիւնը եղաւ կարճ, որովհետեւ քանի մը վայրկեան ետք Փեթար Պապիչ նշանակեց Հ. Մ. Ը. Մ.ի հաւասարութեան կոլը:

8րդ վայրկեանին, Հ. Մ. Ը. Մ.ի ներկայացուցչական շքանշանի առիթ մը, նշանակելու համար իր երկրորդ կոլը, սակայն խմբապետ Գօգօ Ալոպեանի հարուածած փենսիլիին վսպուեցաւ Նրժմէի բերդապահ Ուահիտ Ֆաթթալի կողմէ:

55րդ վայրկեանին Նրժմէ նշանակեց իր երկրորդ կոլը, շնորհիւ՝ Ապպէս Աթուէի, իսկ 75րդ վայրկեանին նոյնիսկ Ֆլէյֆէլ արդիւնքը բարձրացուց երեքի:

88րդ վայրկեանին Իսպիլի կողմէ նշանակուած կոլը, որոշ յոյս մը տուաւ Հ. Մ. Ը. Մ.ի, որ փորձէ արդիւնքը հաւասարեցնել: Այդ մէկը կրնար պատահիլ, եթէ Միտր Պերպեան Նրժմէի բերդին մօտ իրեն ներկայացած սքանչելի առիթը կոլի վերածէր: Այդ առիթն էտք եւ մրցումին կորսուած վայրկեաններուն (91րդ եւ 93րդ) Նրժմէ նշանակեց յաւելեալ երկու կոլեր ալ, շնորհիւ՝ Դրօ Քէիէյեանի եւ Մոհամէտ Հալուէի:

Սաճէս մնաց պարագլուխի դիրքին վրայ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ռաֆիկը: Մոհամէտ Ասաս նշանակեց մրցումին «որբ» կոլը (33րդ), 12ի բարձրացնելով այս եղանակին իր նշանակած կոլերուն ընդհանուր հաշիւը:

Սաֆա - Հ. Մ. Ը. Մ. մրցումը վերջ գտաւ ի նպաստ առաջինին, որ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Հ. Մ. Ը. Մ.ը: Այս մրցումին հետաքրքրական էր իրաւարար Նապիլ Այաթի վերադարձը, որ այս եղանակին առաջին անգամ ըլլալով կը տեսնուէր կանաչ դաշտերուն վրայ: Սուրի մէջ, Ասասը 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց դաշտին տերերէն՝ Թատամոն Սուրէն: Սասարթ ժամալ նշանակեց հարաւի կապին եւ մրցումին միակ կոլը:

Ստորեւ՝ 14րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Աիլի Սայրա - Շապապ Սահէլ	0-2
Ռասիկ - Սաճէս	0-1
Աիա Ալէյ - Պրըժ	0-3
Սաֆա - Հ. Մ. Ը. Մ.	2-1
Նրժմէ - Հ. Մ. Ը. Մ.	5-2
Թատամոն Սուր - Ասասար	1-0
Աիտ - Սալամ	0-2

Ստորեւ՝ դասաւորումը.

ԽՈՒՄԸ	Մ.	Յ.	Հ.	Պ.	Ն.Շ.	ՍՏ. ԿԵՏ
1.- Սաճէս	14	10	3	1	33	21 33
2.- Նրժմէ	14	9	4	1	33	12 31
3.- Շ. Սահէլ	14	8	3	3	24	16 27
4.- Սաֆա	14	8	2	4	26	17 26
5.- Թ. Սուր	14	6	7	1	27	12 25
6.- Սալամ	14	7	3	4	21	14 24
7.- Պրըժ	14	6	4	4	25	21 22
8.- Աիա	14	7	1	6	18	18 22
9.- Աիտ	14	5	5	4	19	17 20
10.- Ասասար	14	4	4	6	16	20 16
11.- Հ. Մ. Ը. Մ.	14	2	4	8	17	27 10
12.- Ա. Սայրա	14	2	2	10	12	30 8
13.- Հ. Մ. Ը. Մ.	14	-	3	11	11	29 3
14.- Ռասիկ	14	-	3	11	8	35 3

●ՍՏՈՐԵՒ՝ 15րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը. (նշենք, թէ դարձի բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան Շաքաք եւ Կիրակի օրերը, բացի՝ 15րդ հանգրուանի մրցումներէն, որոնք տեղի պիտի ունենան շաքաքուան կիսուն):

### ՉՈՐԵՔՈՒԹԻ, 6 ՄԱՐՏ

Նրժմէ - Աիլի Սայրա	2:45ից	Մ. Ասան
Շ. Մ. Ը. Մ. - Շ. Սահէլ	2:45ից	Պ. Տամուր
Թ. Սուր - Պրըժ	2:45ից	Սուր
Անասար - Սաֆա	4:45ից	Պէյրուր

### ՀԻՆԳՇՈՒԹԻ 7 ՄԱՐՏ

Սաճէս - Հ. Մ. Ը. Մ.	2:45ից	Պ. Տամուր
Աիտ - Աիա Ալէյ	2:45ից	Մ. Ասան
Ռասիկ - Սալամ	4:45ից	Պէյրուր

## ՖՈՐՄԱՆԸ 1

# ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԵՐ ԶԱՐԵՑԱԲ ԵՂԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Կիրակի, 3 Մարտին սկսաւ *Ֆորմուլա 1*ի 2002ի աշխարհի ֆուտբոլի առաջին կրան փրին՝ Աստրալիոյ մէջ:

Նախքան մանրամասնութիւնները, նշենք, թէ Շաքաք օրւան *փոլ - փոպիշը* մի մրցումներուն, Ֆեռնանդօ Ալոնսոն արժանացաւ իր առաջին դիրքը, արժանագրելով մէկ վայրկեան 25" 843 արդիւնք մը, 2րդ դիրքը գրաւած էր Ֆեռնանդօ Ալոնսոնը իւր իւրաքանչեւ, գերմանացի Միքայէլ Շումպերը, որ արժանագրած էր մէկ վայրկեան 25" 848 արդիւնք մը: 3րդ դիրքը գրաւած էր Ռիչարդ Լինտօսի վարորդ գերմանացի Ռալֆ Շումպերը, որ արժանագրած էր մէկ վայրկեան 26" 279 արդիւնք մը:

Թէեւ Աստրալիոյ *կրան փրին* վերջ գտաւ Միքայէլ Շումպերի յաղթանակով, սակայն այս *կրան փրին* եղաւ բաւական անբախտ 22 վարորդներէն ուրիշ, որովհետեւ անոնք առաջին իսկ *լէփին* արկած ու-

նենալով չկրցան շարունակել:

Այս ուրիշ բացի, չորս ալ վարորդներ *կրան փրին* չկրցան շարունակել, իսկ երկու ալ վարորդներ մրցումը կիսատ ձգեցին:

Պարիքելլօ, որ *կրան փրին* սկսաւ *փոլ փոպիշը* մի առաջին դիրքին վրայ, անբախտ գտնուեցաւ, երբ առաջին իսկ *լէփին* ունեցաւ արկած մը, երբ Ռալֆ Շումպերը իր ինքնաշարժով բախում մը ունեցաւ անոր հետ, հարուածելով անոր ետեւի անիւներուն, ապա նշանակեց քանի մը երկվայրկեան ետք:

Թէեւ անոնցմէ ռեւէ մէկը չվիրարուեցաւ, սակայն այդ արկածին պատճառով վեց ալ վարորդներ ալ չկրցան մրցումը շարունակել, դարձեալ առաջին *լէփին* ընթացքին:

26 տարեկան Ռալֆ այս *կրան փրին* ետք յայտարարեց, թէ այս արկածին համար ինք մեղադրելի չէ, որովհետեւ ինք երկու անգամ փորձած էր իր ինքնաշարժով գերապահել Պարիքելլոն, որ սակայն արգելք հանդիսացած էր իրեն: Պէտք է նշել սակայն, որ Ռալֆ ինքզինք բախտաւոր պէտք է զգայ, որ այս վտանգաւոր արկածէն անվնաս դուրս եկաւ: Անցեալ տարի, դարձեալ Աստրալիոյ *կրան փրին*, Ռալֆ ունեցած էր ինքնաշարժի ալ արկած մը եւ պատճառ դարձած էր անձի մը մահուան:

Իր կարգին պրայիցի Պարիքելլօ այս անգամ Ռալֆը, որ ետեւեւ եղանակի տեղի ունեցաւ եղանակի առաջին *կրան փրին* Աստրալիոյ մէջ:


Վերադառնալով Միքայէլ Շումպերի արժանագրած յաղթանակին, պէտք է ըսել, որ Ֆեռնանդօ Ալոնսոնը, որ անոր հետ յաջորդաբար երրորդ անգամ ըլլալով կը տիրանար *կրան փրին*, յաջողեցաւ ապահովել եղանակի իր առաջին տասը կետերը: Ան 17րդ *լէփին* արդէն իսկ առաջին դիրքին վրայ էր:

Շումպերը, որ իր ասպարէզին ընթացքին իր 54րդ *կրան փրին* կը շահէր, *փոտիում* բարձրանալէ ետք յայտարարեց, թէ իր կարծիքով պէտք էր, որ փոխանակ այս *կրան փրին* շարունակելու, անիկա պէտք էր, որ ընդհատուէր եւ վերստին սկսէր, հակառակ անոր, որ *Ֆորմուլա 1*ի օրէնքը այդպէս չէ: Շատերու համաձայն, այդ օրէնքը պէտք է, որ փոխուի եւ մրցումը ընդհատուի:

Շումպերը իր յաղթանակը արժանագրեց մէկ ժամ 35 վայրկեան եւ 36 երկվայրկե-

անի ընթացքին: 2րդ դիրքը գրաւեց քուրմպիացի իտալացի Ֆալլօ Մոնթոյա (Ռիչիլըմս), որ արժանագրեց 1 ժամ 35' 55" արդիւնք մը, իսկ երրորդ դիրքը՝ ֆինլանդացի Բիլի Ռայթը (Մաքլարըն), որ արժանագրեց 1 ժամ 36' 01" արդիւնք մը:

Նշենք, թէ այս *կրան փրին* ընթացքին, ամէնէն արագ *լէփ* արժանագրեց Ռայթըն՝ մէկ վայրկեան 28" 541 (37րդ *լէփին*): Նշենք, թէ եղանակի երկրորդ *կրան փրին* տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մարտ 17ին՝ Մալեպիոյ մէջ: Ստորեւ՝ երկուան ՍՏՈՐԵՒ մրցումը



Ռալֆ Շումպերի ինքնաշարժը՝ օդին մէջ:

*կրան փրին* արդիւնքները.

- 1.- Միքայէլ Շումպերը (Գերմանիա) *Ֆեռնանդօ Ալոնսոն* 1 ժամ 35' 36"
- 2.- Իտալացի Ֆալլօ Մոնթոյա (Քուրմպիա) Ռիչիլըմս 1 ժամ 35' 55"
- 3.- Քիլի Ռայթընը (Ֆինլանդիա) Մաքլարըն 1 ժամ 36' 01"
- 4.- Էտի Ըրվայն (Արիստահա) Ժակուար մէկ *լէփ* ուշ
- 5.- Մարք Ուեպլըր (Աստրալիա) Միխարտի երկու *լէփ* ուշ
- 6.- Միքա Սալօ (Ֆինլանդիա) Թոյրթա

կիսատ ձգած վարորդները.

- Տեյվիտ Քուլթարտ (Արիստահա) Մաքլարըն 33րդ *լէփին* Ժաք Վիլլընտ (Քանադա) ՊԱՐ 27րդ *լէփին* Թաքուամ Սաթօ (Ճափոն) Ճորտըն 12րդ *լէփին* Ետնոս Թրուլի (Իտալիա) Ռընօ 8րդ *լէփին*

(Ֆրանսա) ՊԱՐ Էլըն Մաքսիշ (Արիստահա) Թոյրթա

Երկուան *կրան փրին* կիսատ ձգեցին երկու վարորդներ: Անոնք են. Հալլօ - Հեռըլլ Ֆրենցըն (Գերմանիա - Արոյ) եւ Էնրիքե Պեռնուտի (Արիստահա - Արոյ): Ստորեւ դասաւորումը.

1.- Միքայէլ Շումպերը (Գերմանիա) *Ֆեռնանդօ Ալոնսոն* 10 կետ

- 2.- Իտալացի Ֆալլօ Մոնթոյա (Քուրմպիա) Ռիչիլըմս 6 կետ
- 3.- Քիլի Ռայթընը (Ֆինլանդիա) Մաքլարըն 4 կետ
- 4.- Էտի Ըրվայն (Արիստահա) Ժակուար 3 կետ
- 5.- Մարք Ուեպլըր (Աստրալիա) Միխարտի 2 կետ
- 6.- Միքա Սալօ (Ֆինլանդիա) Թոյրթա Օլիվիէ Փանիս 1 կետ

ՍՏՈՐԵՒ՝ առաջին *լէփին* դուրս մնացած վարորդները. Ռուպիլ Պարիքելլօ (Պրայիլ) *Ֆեռնանդօ Ալոնսոն* Շումպերը (Գերմանիա) Ռիչիլըմս Ճիանքարլօ Ֆիլիպելլա (Իտալիա) Ճորտըն Ֆելիքե Մասսա (Պրայիլ) Սաուպլըր Սիք Հիտֆէլտ (Գերմանիա) Սաուպլըր Ենսըն Պաթըն (Արիստահա) Ռընօ Օլիվիէ Փանիս 1 կետ

## ՄՈՍԿՈՒԱ, ՌԻԱՇԻՆԿՈՒՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Ան «Մաքլարի Քոնսուլեյց» թերթին ըսած է, թէ Ռաշինկըն նշեալ հարցին զօմով ոռու պաշտօնատարներու հետ խորհրդակցած է Հոկտեմբեր - Նոյեմբերին եւ անոնք գիտեն, թէ ապիկա պարպապէս մարպուտի եւ Կիւնզիլ օրագիր մըն է:

Վարչապետ ընդօժած է, որ ամերիկեան ուժերը Փանքիսի կիրճը պիտի չմեկնին, այլ անոնք պիտի դրկուին մարպուտի կեդրոններ, խարիսխներ, մասնախտուկ ուժերու մարպուտի հիմնարկներ:

Ռաշինկընի եւ Վրաստանի համաձայն, Չեչենիոյ սահմանին մօտակալ Փանքիսի կիրճին մէջ ապաստանած են իսլամական Կիւնզիլներ: Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իլյո Իվանով նախ յայտնած էր, թէ ամերիկեան ուժերուն ներկայութիւնը կրնայ «աւելի եւս վատարացնել արդէն իսկ ծանրակշիռ կացութիւնը», իսկ ռուսական լրատուադրիւնները սաստիկ յարձակողականի ձեռնարկած են Շեւարտնաձի դէմ:

Սակայն Փոթին Ուրբաթ օր յայտնած է, որ ամերիկեան ներկայութիւնը «ողբերգութիւն մը» պիտի չըլլայ:

## ԱՔԻԱԶԻՈՅ ՇՈՐԶ՝ ԼԱՐՈՒՄՈՒԹԻՒՆ

Ամերիկեան առաքելութիւնը նաեւ թափ տուած է վրաստանի ընթացիկ Արիստահալոյ շրջանին շուրջ լարուածութեան: Արիստահալոյ անշտողականներ Մոսկուայի Կոնգրեսի կողմէն ուղղած են:

Ռուս քաղաքական կարգ մը անձնատիրութիւններ յայտնած են, թէ իբրեւ հակադրութիւն՝ Մոսկուա կրնայ Արիստահալոյ անկախութիւնը ճանչնալ կամ նոյնիսկ պայն կցել:

Արիստահալոյ վարչապետ Արժիսապ, որ Մոսկուա կը գտնուէր բժշկական խնամքի համար, Փոթինի նամակ մը յաճօ է՝ Ռուսիոյ հետ զննարկակցութեան համաձայնութիւն կոչ ուղղելով:

Շաքաք օր, Արիստահալոյ ընթացիկ ղեկավարութիւնը նախապէս ծրագրուած խորհրդարանական ընտրութիւններ կայացուցած է: Թիֆլիս Կանոնք ապօրինի հոշակած է:

63 թեկնածուներ կը մրցէին խորհրդարանական 35 պոթններու համար: Թեկնածուներու կարգին էին 3 վրացիներ:

(ՌՈՅԹԸՐԸ)

**ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՆՍՐՈՒՄ**  
**225ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ - ՉՐՈՅՑ**  
**«ԱՎՆԱՐԿ ՍՓԻՌՔԱԶԱՅ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ»**  
*Դասախօս՝ արուեստաբան*  
**ՄՈՎՍԷՍ ՀԵՐԿԵԼԵԱՆ**  
 Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 4 Մարտ 2002, երեկոյեան ժամը 7:00ին, «Կարտըն Թատրը» պանդոկի սրահին մէջ:  
 Հեռաձայն 04 / 417741  
 www.gardentowerhotel.com/MondayForum.htm

